Վարկային պատմության և վարկային ամփոփ գնահատականի (սքորի) էությունը և բարելավման ուղղությունները

✓ Վարկային պատմություն

«Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն վարկային պատմությունը հաճախորդի կողմից ստանձնած ֆինանսական պարտավորությունների, վերջինների կատարման վերաբերյալ տեղեկությունների ամբողջությունն է, որը հավաքվում և պարբերաբար նորացվում է:

Վարկային պատմությունը պարունակում է պարտքերի, վճարումների, վճարումների կատարման վերաբերյալ առնվազն 5 տարվա վաղեմությամբ տեղեկատվություններ, այն ազդում է վարկի գծով որոշումների կայացման վրա:

Վարկային պատմության մեջ սխալ կամ թերի տվյալների առկայության դեպքում, համաձայն «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի, վարկառուն կարող է այդ մասին տեղեկացնել վարկային բյուրոյին կամ ուղղակիորեն դիմել տեղեկատվություն տրամադրող ֆինանսական կազմակերպություններին վերջինիս պարզաբանման և ուղղման նպատակով:

✓ Վարկային ամփոփ գնահատական (սքոր)

Վարկային ամփոփ գնահատականը (սքորը) սքորինգային համակարգում ձևավորվող հաճախորդի վարկարժանության գնահատականն է, որը ստացվում է հաճախորդի վերաբերյալ տարաբնույթ տեղեկատվության վերլուծության արդյունքում:

Սքորի հաշվարկման հիմքում ընկած են հետևյալ գործոնների խմբերը՝

- Հաճախորդի վարկային պատմությունը,
- Հաճախորդի զբաղվածության և եկամտի վերաբերյալ տեղեկատվությունը
- Հաճախորդի սոցիալական և վարքագծային այլ գործոնները:

«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՍՊԸ-ի կողմից հաճախորդների վարկունակության գնահատման և վարկերի տրամադրման գծով որոշումներ կայացնելու գործընթացում վարկային ամփոփ գնահատական (սքոր) կիրառվում է անհատական մոտեցմամբ, վերոնշյալ և այլ գործոնների հիման վրա՝ խորհրդի որոշմամբ:

✓ Վարկային պատմության և վարկային ամփոփ գնահատականի (սքորի) բարելավման ուղղություններ

Վարկային պատմության և սքորի բարելավման համար հարկավոր է՝

- իրականացնել ստանձնած պարտավորությունների գծով վճարումները ժամանակացույցին համաձայն.
- խուսափել վարկային ծանրաբեռնվածությունից և չհիմնավորված նոր վարկային հայտերից.
- խուսափել անվստահելի անձանց երաշխավորությունների տրամադրումից:

Վարկային պատմության, սքորի և վերջինների բարելավման վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն կարող եք գտնել www.abcfinance.am և www.acra.am կայքերում: